Փոխադրելի ժամանակավոր վառարանները քիչ են պիտանի բնակելի սենյակների տաքացման համար, վորովհետեւ դրանք շուտ են սառչում, սենյակի հավասարաչափ ջերմաստիճան շեն տալիս, դրանց պատերի վրալի փոշին ալրվում ե, առողջության համար վնասակար գաղեր գոյացնելով։

Տեղական տաքացման բոլոր տեսակների ժամանակ տաքացնող անոթների խնամք եղանակում։ Հատկապես կարե-

վոր ե ծխնելուզի ները ժամանակին ծածկելը ածխահոտը (շմուլ) կանխելու համար։

Կենտրոնական տաքացումը լինում է՝ ողալին, ջրալին ու շողեց ջրալին և շողետաքացում։

Կենտրոնական տաքացումը մի շարք հարմարություններ ունի. այդ ազատում ե փայտ բերելուց, սենյակների կեղտոտվելուց և ածխահոտ չլ տալիս։

Կենտրոնական տաքացման ամենալավ տեսակը ջրալինն է, բայց այդ ուշադիր խնամք ե պահանջում, վորովհետեւ խորվակներում ջուրը սառչելու դեպքում խողովակները տրաքում են։

### ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Բնակելի և աշխատանքալին շենքերի լուսավորությունը մեծ ազդեցություն ե գործում առողջության և աշխատունակության վրա։ Մեզանից լուրաքանչյուրը գիտի արիության այն զգացմունքը, վոր մենք զգում ենք արեով առատորեն լուսավորված սենյակում։ Մութ բնակարաններում տարածվում են այնպիսի հիվանդություններ, ինչպիսիք են՝ յերեխաների բախխոր (վողնաշարատապը), թոքախար, ընդհանուր սակավարյունություն և այլն։

Լուսավորությունը լինում է բնական (արևալին) և արհեստական (լուսավորման անոթների ողնությամբ)։

Ամենից շատ լուս են ունենում այն տները, վորոնց պատուհանները դարձված են դեպի հարավ-արևելք և արևի կողմից դրանց չեն խանգարում բարձր շենքերը։

Բնակելի շենքի բնական լուսավորությունը կախված ե նաև պատուհանների քանակից և լուրաքանչյուրը պատուհանի մակերեսի մեծությունից։ Վորքան ավելի շատ են պատուհանները և վորքան ավելի մեծ ե լուրաքանչյուրը պատուհանի մակերեսը, այնքան ավելի շատ լուս ե մանում շենքի ներսը։

Սենյակի բնական լուսավորման մեծությունը վորոշվում

և այն հարաբերությամբ, վոր գորություն ունի պատուհանների ապակով ծածկած մակերեսի և հատակի մակերեսի միջև: Բնակելի սենյակների բնական լավ լուսավորության համար այդ հարաբերությունը պետք է լինի 1:10, ալինքն պատուհանների ապակով ծածկած մակերեսը պետք է պակաս լինի հատակի մակերեսից տաս անգամից վոչ ավելի: Դասարանային սենյակների համար այդ հարաբերությունը պետք է լինի 1:5:

Շատ կարեոր ե պատուհանների ապակիները բացարձակորեն մաքուր պահել Բացի այդ, սենյակի բնական լուսավորության համար նշանակություն ունի պատերի և առաստաղի գունավորումը: Սպիտակ գունի ժամանակ լուսավորությունն ավելի ուժեղ է լինում:

Արհեստական լուսավորության աղբյուրներին պատկանում են՝ մոմերը, կերասինի լուսավորությունը, գաղալին լուսավորությունը և ելեկտրական լուսավորությունը:

Մոմերը թույլ լուս են տալիս և փչացնում են սենյակի ողը:

Կերասինի լուսավորությունը փչացնում է ողը մրով, տաքացնում է սենյակը, վտանգավոր է հրդեհի տեսակետից և սակավազոր է մեծ սենյակներ լուսավորելու համար:

Գաղալին լուսավորությունը վառ լուս է տալիս, բայց այդ թունավորման և պայթման վտանգ է պարունակում իր մեջ:

Ամենահարմարը ելեկտրական լուսավորությունն է, այդ հավասար լուս է տալիս և ողը չի փչացնում:

### ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՑԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՍԵՆՅԱԿՆԵՐԻ ՄԱՔՐՈՒՄԸ

Աշխատանքային և բնակելի սենյակներն ամեն որ պետք է մաքրել հատակները սրբելով փալտի թաց թեփով կամ թաց լաթերով:

Առնվազն 5—6 որը մեկ անգամ անհրաժեշտ է հատակները լվանալ բոլոր սենյակներում:

Աշխատանքային սենյակներում անհրաժեշտ է ամեն որ

թաց լաթերով փոշին հեռացնել կահավորման առարկաներից, դագգայիներից, կահարասիթից և այլն:

Աշխատանքային ամիսը սեկտեմբերից մարտի մասնաւորության համար այդ հարաբերությունը պետք է լինի 1:10, ալինքն պատուհանների ապակով ծածկած մակերեսը պետք է պակաս լինի հատակի մակերեսից տաս անգամից վոչ ավելի: Դասարանային սենյակների համար այդ հարաբերությունը պետք է լինի 1:5:

Շատ կարեոր ե պատուհանների ապակիները բացարձակորեն մաքուր պահել Բնակելի սենյակներում չի կարելի թույլ տալ, վոր ծխախոտի ավելցուկները հատակին դցեն: Զի կարելի թքել հատակին:

Աշխատանքային և բնակելի սենյակները մաքրելու ժամանակ, պետք է քանահարել այդ սենյակները:

ԶՈՒԳԱՐԱՆՆԵՐԸ ՄԱՔՐՈՒՄ ՊԱՀԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Մարդու կղկղանքը կարող է պարունակել վարակիչ հիվանդությունների՝ վորովայնային տիֆի, պարատիֆի, արենաւուծուի և ալզոց հանրեներ (միկրոբներ):

Մարդու մեզը թունախոր նկութ է պարունակում, բացի այդ մեզում կարող են լինել նաև գոնոռեալի (սուսանակի) գրգռիչներ:

Ուստի մեզն ու կղկղանքն անհրաժեշտ է հեռացնել: Դրա համար կառուցվում են արտաքնոցներ—զուգարաններ:

Զուգարանները պետք է տաքացված լինեն և լավ քամահարվեն: Ցանկալի լի զուգարանների հատակը բետոնից կամ ցեմենտից լինել: Զուգարանի ծակերն ավելի լավ է ուղկամ հատակի վրա շինել: Ցեթե զուգարանները փայտից են դակի հատակի վրա շինել: Ցեթե զուգարանները փայտից են դակերը, ծակերը, միզեկառուցված, անհրաժեշտ է ձյութել հատակը, ծակերը, միզեկառուցված, պահերի ներքեկի մասը:

Անհրաժեշտ է զուգարաններում պահպանել սանիտարիալ հետևյալ պահպանչները:

1. Զուգարանի դռները լավ ծածկել:

2. Զուգարաններում որինակելի մաքրություն պահպանել:

3. Չկեղտուտել ծակերը, միզեկերը հարմարանքները և հատակը:

4. Միզեկերը հարմարանքները ժամանակառ-ժամանակ վանալ տաք ջրով:

5. Կանոնավոր հովանաբության համար գուգարաններում ջերմաստիճանը պահպանել 1-2 աստիճան ավելի բարձր, քան բնակելի սենյակներում:

Գուգարանները վարակագերծ անելու համար գործադրը վում ե կարբուզան թթվի 40%, լուծույթ, քլրակը լուծույթ կամ կրակաթ:

Կրակաթ պատրաստելու համար լուծում են նոր մարած կրի մի մասը ջրի յերկու մասում:

Կարբուզակաթ պատրաստելու համար վերցնում են 40 գրամ մաքրած կարբուզան թթու և 1,000 գրամ ջուր:

### ՄՆՈՒԴԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԿՈՄՊԼԵՔՍ

Մարդու կերակուրը վորոշ քիմիական բաղադրությունն պիտի ունենա. կերակուրը պետք ե բաղկացած լինի սպիտակուցից (ալբումինից), ճարպից, ջրաբնածխուկներից, ջրից և աղից:

Կերակրի սպիտակուցներն այն շինարարական նյութն ե, վորը գնում ե մարդու որդանիզմի հյուսվածքների աճման և «վերանորոգման» համար:

Կերակրի ճարպը որդանիզմի համար տաքության գլխավոր աղբյուրն ե:

Կերակրի ջրաբնածխուկները մարդու որդանիզմի հներդիալի գլխավոր աղբյուրն են:

Սպիտակուցները մտնում են գլխավորապես մսի, կաթի, ձուերի բաղադրության մեջ:

Ջրաբնածխուկները մանում են սնունդի բուսական մթերքների - ալուրի, շաքարի, բանջարեղենի և մրգեղենի բաղադրության մեջ:

Բացի սպիտակուցից, ճարպից, ջրաբնածխուկներից, ջրից ու աղից, կերակուրը պետք ե պարունակի հատուկ լրացուցիչ նյութեր, վորոնք կոչվում են վիտամիններ: Այդ նյութերը գտնվում են լեռեսը չքաշված կաթի, կարագի, ձվի դեղնուցի, թարմ կաղամբի, լերդի (ջիգարի), թարմ մրգերի, լիմոնի և նարինջի մեջ:

Յեթե կերակուրը զուրկ ե այն վիտամիններից, վորոնք գտնվում են թարմ բանջարեղենի մեջ, այդպիսի կերակրից լիդագարությամբ (սկրբուտով) հիվանդացում ե առաջանում: Այդ հիվանդությունից խուսափելու համար անհրաժեշտ է կերակրի մեջ թարմ կանաչեղեն ու բանջարեղեն դցել:

Կերակրի մթերքները լավորակ պիտի լինեն:

Կերակրի մթերքների վատորակությունը կախված ե զանազան պատճառներից:

Ալլուրը կարող ե իր մեջ պարունակել հատուկ սնկիկ, վոր կոչվում ե սեպաստելի: Յեթե այդ հացի մեջ ե ընկնում, շատ ծանր հիվանդություն ե առաջացնում, վորին հետեւում են ջղաձգություններ, ծալքանդամների մեռուկ և հաճախ այդ հիվանդությունը մահով ե վերջանում:

Վատորակ մսի միջոցով մարդիկ վարակվում են ձնուներով, ձարակով (տրիխինա), նույնապես և թոքախտով, խնախտով (սապ), սիրիակախտով և այլ վարակիչ հիվանդություններով:

Այդ հիվանդությունները կանխելու համար սպանդանոցներում անասնաբուժական հսկողություն ե անցկացվում: Անպետք միսը վոչնչացվում ե: Վաճառքի յե դուրս բերվում միշտական դրոշմած միսը:

Միսը կարող ե կեղտոտվել նաև ճանճերի կողմից, վորոնք մի շաբաթ վարակիչ հիվանդությունների տարածողներն են, որինակ՝ վորովայնալին տիֆի, արյունալուծի, խորերացի:

Ուստի մթերքների պահեստաներում, ուտելեղենի խանութներում, ճաշարաններում բուժետներում, խոհանոցներում անհրաժեշտ ե մշտապես պալքար մղել ճանճերի դեմ:

Հատկապես զգույշ պիտի կերաբերվել կոնսերվներին: Կոնսերվների փշացման հիմնական հատկանիշն ե՝ թիթեղլարանկաների կափարիչը ուռածությունը:

Կաթին հաճախ մկանակար խառնուրդներ են ավելացնում: Բացի այդ հում կաթը կարող ե թոքախտով և այլ վարակիչ հիվանդություններով մարդկանց վարակման աղբյուր դառնալ:

կաթի լեռացնելը սպանում ե նրա միջի մանրեները (միկրոբները):

Հում ջուրը նույնպես կարող ե հիվանդությունների աղբյուր դառնալ: Հում ջրի միջոցով տարածվում են վորովայնային տիֆը, խոլերան, արյունալուծը և այլ վորովայնային հիվանդությունները: Այսաեղից կանոն ե՝ հում ջուր մի խմիր: Ջրի լեռացումը ապահովում է ջրի մեջ լեղած հիվանդաբեր բոլոր մանրեները:

### ԿԵՐԱԿՐԻ ՄԹԵՐՔՆԵՐԻ ՓՈԽԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Կերակրի մթերքները սալլալին, ջրալին և լերկաթուղարին տրանսպորտով փոխադրելու ժամանակ հնարավոր ե վոչ միայն նրանց կեղտոտումը, այլ և հիվանդաբեր մանրեներով վարակումը:

Փոխադրության ժամանակ կերակրի մթերքները պաշտպանելու համար, անհրաժեշտ ե հոգ տանել ամուր, լավ տարալի (փաթթոցի) և մթերքները բըեզենտով ծածկելու մասին: Սալլերը, սահնակները, վագոնները և նավերի ներքնահարկերը պետք ե մաքուր և ախտահանած լինեն: Սալլապաններին և այլ անձնավորություններին պետք ե կտրականապես արգելել մթերքների վրա նստել:

Ամենից լավ ե քաղաքի մեջ մթերքները փոխադրել ծածկած փուրզոններում:

### ՄԹԵՐՔՆԵՐԻ ՊԱՀՈՒՄԸ

Վորպեսզի մթերքները չփշանան, չկեղաստվեն և վարակման չենթարկվեն, դրանք պետք ե պահել սանիտարական կանոնների համաձայն: Շուտ փշացող մթերքները պետք ե պահել սառցարկղներում կամ սառցարաններում: Պահեստների շենքերի չափազանց մեծ խոնավությունը նպաստում է մըթերքների վրա բորբոսի զարգացմանը:

Պահեստների շենքերը պետք ե որինակելի մաքուր պահել. պետք ե վճռական միջոցներ ձեռք առնել կրծողների (առնետների, մկների) դեմ, վորոնք վոչ միայն վոչնչացնում

են մթերքները, այլ և հաճախ նպաստում են հիվանդաբեր մանրեներով նրանց վարակմանը:

ԽՈՀԱՆՈՑՆԵՐԸ, ՃԱՇԱՐԱՆՆԵՐԸ ԲՈՒՖԵՏՆԵՐԸ ՄԱՅՈՒՄ ՊԱՀԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Խոհանոցում ստացվող բոլոր մթերքները պետք ե նախապես բժշկի զննության լենթարկել:

Մթերքների ավելցուկները և ամանները լվացած ջրերը պետք ե պահել հատուկ, լավ ծածկվող կափարիչ ունեցող տակառներում:

Կաթսաները և խոհանոցի այլ ամաննեղենը պետք ե որինակելի մաքուր պահել:

Կողմանակի անձանց խոհանոց մտնելը պետք ե արգելել:

Ճաշարանները պետք ե կարգին և մաքուր պահել: Ճաշեղանները պետք ե հստակ վիճակում պահել:

Մաքուր պետք ե պահել նաև ընդհանուր և անհատական գործածության ամաննեղենը:

Ճաշարանները պետք ե ունենան բավականին լուսավորություն, լավ հովանարություն և հանվելու առանձին սենյակ:

Ճաշարանները պետք ե ապահովված լինեն լվացարաններով, սապոնով և ամեն որ փոխվող սրբիչներով, վորպեսզի հաճախորդները կարողանան ուտելուց առաջ ձեռքերը լըվանալ:

Ճաշարաններում միշտ պետք ե լեռացրած ջուր լինի:

Ճաշարանների մաքուրը պետք ե կատարել նախաճաշից, ճաշից և ընթրիքից հետո, ըստ վորում ընթրիքից հետո պետք ե լիակատար մաքուր կատարել՝ հատակները լվանալ սեղանները լվանալ տաք ջրով ու սապոնով:

Բուֆետներում մթերքները պետք ե պահել ապակով ծածկած ցուցափեղկերում:

Խոհանոցների, ճաշարանների, բուֆետների և ալոց

աշխատողները պետք ե իմանան առողջապահության կանոնները և խստիվ կատարեն այդ կանոնները:

Արտահագուստը միշտ պետք ե մաքուր լինի: Խոհարարներն ու հացթուվները պետք ե լողանան բաղնիքում առնըլվազն ամիսը 4 անգամ:

Քոսի, տրախոմալիի, աղեստամոքսալին հիվանդությունների, վեներական հիվանդությունների, թոքախտի և այլ հիվանդությունների տարածումը կանխելու համար, հասարակական սննդի ձեռնարկությունների աշխատղները պետք ե լենթարկվեն բժշկի խնամքով զննության, առնվազն տասնորյակը մեկ անգամ:

Ճաշարանների և բուֆետների մաքրության մասին պետք ե հոգ տանեն վոչ միայն ճաշարանների և բուֆետների աշխատողները, այլ և հաճախորդները:

### ՍՆՈՒՆԴԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅԱՆ ԺԱՄՄԱԿԱՆ

Ճանապարհ գնալիս անհրաժեշտ ե սննդի նկատմամբ հատուկ զգուշություն պահպանել, վորպեսզի աղեստամոքսալին հիվանդություններ չառաջանան:

Հատուկ զգուշությամբ պետք ե վերաբերվել մսեղեն ուտելիքներին, կաթին և կվամներին, վոր վաճառում են մասնավոր առևտրականները կալարաններում: Ճանապարհին հում ջուր խմելուց պետք ե զգուշանար: Ուտելուց առաջ ամեն անգամ պետք ե ձեռքերը լվանալ: Գավաթներն ու բաժակները գործածելուց առսջ պետք ե անպայման լվանալ:

### ԱՆՁՆԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԿՈՄՊԼԵՔՍ

#### ԱՆՁՆԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Մարդու մարմի վրա որվա ընթացքում շատ կեղա է կուտակվում, իսկ կեղտի մեջ կարող են վարակիչ հիվանդությունների մանրեներ լինեն:

Կեղտը կուտակվում ե յեղունգների տակի տարածության մեջ, ուստի յեղունգները պետք ե կարճ կտրել և յեղունգների տակի տարածությունը հաճախակի մաքրել:

Փոշին, մարդու մաշկի վրա նստելով, խառնվում ե քըրտինքի հետ և կպչող մասսա յէ գոյացնում, վորը ծածկում ե մաշկի ծակոտիները և հենց դրանով ել դժվարացնում ե շընչառությունը մաշկի միջով և նրա միջով որդանիզմից թունավոր նկութերի դուրս հանումը: Ուստի մաշկի մաքրությունը մշտական հոգատարության առարկա պիտի լինի:

Ամեն որ առավոտը պետք ե սապոնով լվանալ լերեսը, վիզը և ձեռքերը մինչեւ արմունկները: Քնելուց առաջ վոտները լվանալ: Առնվազն մեկ անգամ տասնորյակում անպայման բաղնիքում լողանալ: Ել ավելի լավ ե ամեն որ դուշընդունել, լեթե դրա համար հնարավորություն կա:

Մազերը պետք ե կարճ խոռզի և տասնորյակում առնըվազն 2 անգամ լվանալ տաք ջրով ու սապոնով:

Բերանի խոռզի և տամմերի հատուկ և մշտական խընամք ե պահանջվում: Որական լերկու անգամ – առավոտը և քնելուց առաջ պետք ե բերանը վողողել տաք ջրով, իսկ տամմերը մաքրել ատամի խոզանակով ու փոշով:

#### ԱՐԵՎԻՑ ՈՒՏՎԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Արեգակը՝ եներգիալի, ուժի և առողջության հզոր արդյուր ե:

Միևնույն ժամանակ արևից անկանոն, վոչ չափավոր կերպով ոգտվելու ժամանակ առողջության համար վտանգ ե առաջանում, այն ե՝ մարմի այրվածքներ, արևահարություն, սրտի գործունելության և ներվալին սիստեմի խանգարում:

Ուստի ամառը արևալին վաննաներ ընդունելու ժամանակ պետք ե պահպանել հետևյալ կանոնները:

1. Առանց բժշկի խորհրդի արևալին վաննաներ չընդունել:

2. Արևալին վաննաների ընդունումը կատարել խիստ

հաջորդականությամբ, սկսելով 5 ըոպելից և ամեն որ 3—5 րոպե ավելացնելով:

3. Արեալին վաճանաներ ընդունելու ժամանակ գլուխը ծածկել:

4. Արեկի ներգործության տակ դնել հավասարաշափ մարմնի բոլոր մասերը (խստապահորեն ժամացույցով մարմնի զանազան կողմերը դարձնել դեպի արել):

### ԼՈՂԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԶԲԻՑ ՈԳՏՎԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Ամառը լողանալը նպաստում է մարմնի մաքրությանը և ամրացնում է վողջ որդանիղմը:

Լողանալու համար գետի մեջ պետք է տեղ ընտրել առանց փոսերի, ջրապտուտների, մաքրոր ափով և հարթ ավազոտ հատակով: Ավելի լավ է արեալին ափում լողանալ:

Պետք է խուսափել ուժեղ հոսանքի տեղերից:

Վնասակար և լողանալ սոված ժամանակ և ուտելուց անմիջապես հետո:

Զի կարելի ջրի մեջ ընկնել քրտնած մարմնով:

Վնասակար և ջրի մեջ մնալ մինչև մարմնի կապտելը և մինչև սարսուռ զգալը:

Լողանալուց հետո անհրաժեշտ է մարմինը սրբել չորացնել:

Ծովում լողանալու համար պահանջվում են բժշկի խոր հուրդներն ու կոնտրոլը:

### ՀԱԳՈՒՍՏԻ ՅԵՎ ՎՈՏՆԱՄԱՆԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ

Հագուստն ու վոտնամանը ծառալում են մարդու մարմնի տաքությունը պահպանելու և արտաքին վնասվոծքներից նրան պաշտպանելու համար:

Հագուստը պետք է համապատասխան լինի տարվա լեզվանակին. ձմեռը պետք է պաշտպանի սառչելուց, ամառը մարմնի չափազանց տաքանալուց:

Հագուստն իր գործվածքի միջով պետք է լավ թողնի: Վոր ոդ անցնի:

Մարմնի վրալի սպիտակեղենը պետք է ներծծի և իր միջով թողնի ձարդու մարմնի քրտինքն ու գոլորշացումը:

Տարվա ցուրտ ժամանակ հագուստը պետք է կարածինի բրդի գործվածքից, իսկ ատարվա տաք ժամանակ՝ բաց (սպիտակ) գուշնի բայթակի գործվածքից:

Հագուստը մարմնի վրա լավ կպած պիտի լինի և չպետք ե սեղմի վզի, կրծքավանդակի և փորի արյունատար անոթները:

Հագուստն իր համար խնամք է պահանջում:

Հագուստին փոշի, կեղտ և կպչում, իսկ փոշու և կեղակ մեջ կարող են վարակիչ հիվանդությունների մանրեներ լինել: Հագուստի վրա վոչիներ են ընկնում: Հագուստը պետք է ամեն որ մաքրել փոշուց ու կեղակից: Զի կարելի հագուստը հապած անկողնի մեջ պառկել:

Վոտնամանը պետք է կարած լինի վոտի համեմատ: Կոշկատակի կաշին պետք է առածիդիդ լինի: Չափաղանց պինդ և խիտ կոշկատակը հարում է վոտները:

Կոշկի թաթի ծայրի ձեր պետք է լայն և կլորացրած լինի: Սուր ծայրերը սեղմում ու հարում են վոտների մատները:

Կրունկը շատ բարձր չպիտի լինի, 3 սանտիմետրից վոչավելի:

Վոտնամանն ամեն որ պետք է մաքրել ցեխից և ողել:

### ՄԱԿԱԲՈՒԾԱՅԻՆ ՏԻՖԵՐ

Մակաբուծային (պարագիտային) տիֆեր կոչվում են այն տիֆերը, վորոնց սարածողներն են հանդիսանում միջաւ-մակաբուծները—վոչիները և փայտոչիները:

Պարագիտային տիֆերին են պատկանում բծափոր յեվ վերադարձ տիֆերը:

Վոչչոտությունը՝ բծափոր և վերադարձ տիֆերի տարածման հիմնական պատճառն է:

Նկատի ունենալով, վոր պարագիտային տիֆերի տարածման գլխավոր պատճառը վոչլոտությունն է, ապա վոչլոտության վոչնչացումը հիմնական միջոցառումն է հանդիսանում՝ այդ հիվանդությունները կանխելու համար:

Վոչլոտության վոչնչացման միջոցներն են.

1. Մազերի ժամանակին խուզումը:

2. Բաղնիքում կանոնավոր լողանալը (առնվազն տասնորդակը մեկ անգամ), հագնելու և անկողնի սպիտակեղենը փոխելով:

3. Հագուստը, անկողինը և բնակարանը մաքուր պահելը:

Հանրակացարանները, բարակները և դպրոցները վոչլոտություն բերելը կանխելու համար, վոչլոտությունը հայտաբերելու մասսայական զննություններ և սիստեմատիկ ընտրովի ստուգումներ են կատարում:

Հանրակացարաններում, զորանոցներում, բարակներում ու դպրոցներում վոչլոտություն լերևալու դեպքում, սանիտարական մշակում և կատարվում, վորը բաղկացած ե լինում հետևյալից:

1) Վողջ մարդկային կազմը բաղնիք են ուղարկում, մազերը խուզելով և հագնելու և՝ անկողնի սպիտակեղենը փոխելով.

2) Բնակելի շենքերի, ինվենտարի և հագուստի միջատաշնչում և կատարվում, անկողիններն ամբողջովին փոխելով:

Բժավոր տիֆով բոլոր հիվանդացածներն ուղարկվում են հիվանդանոց՝ առողջներից նրանց մեկուսացնելու համար:

Այն սենյակը, վորաեղ գանգել և բժավոր տիֆով հիվանդացածը, պետք է միջատաշնչման լենթարկել:

Բժշկականությունն այնպիսի միջոց է իմանում, վորը միշտ վարակիչ հիվանդությունների նկատմամբ մարդկանց անզգայուն և դարձնում: Այդպիսի միջոց են ծառայում սրսկումները:

Ներկայումս նախազգուշական միջոցներ են ձեռք առնում ծաղկի դեմ (բոլորի համար պարտադիր կարգով), վորովայնալին տիֆի, պարտադիֆի, խոլերալի, քութեշի, դիֆթերիտի, տետանոսի, կատաղության դեմ:

1919 և 1924 թվականներին խորհրդացին իշխանության կողմից պարտադիր ծաղկահատության մասին որենքներ են հրապարակված: Այդ որենքների համաձայն ծաղկիկը պատվաստվում է բորոր քաղաքացիներին պարտադիր կարգով՝ կյանքի առաջին տարում, հետո 10—18 տ. հասակում և վերջապես 20—21 տ. հասակում:

Կարմիր բանակում պատվաստումները պարտադիր են ծաղկի, վորովայնալին տիֆի և պարտադիֆի դեմ:

Այդ պատվաստումները առողջության համար բոլորովին անվասա են և խոշոր չափով պահպանում են հիվանդացումներից:

Պատվաստումները պետք է կրկնել վորոշ ժամկետներից հետո, վոր սահմանված են լուրաքանչյուր տվյալ հիվանդության համար:

Այն մարդը, վորին պատվաստում է կատարած, կամ բոլորովին չի հիվանդանում այն հիվանդությամբ, վորի դեմ պատվաստում է կատարած, կամ, հիվանդանալով, շատ ավելի հեշտ և տանում այդ հիվանդությունը, քան այն մարդը, վորը չի պատվաստված:

#### ԱԽՑԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՄԻՋԱՏԱՉՆՉՈՒՄ

Ախտահանություն կոչվում է վարակիչ հիվանդություններ առաջացնող մանրեների լիակատար վոչնչացումը:

Ախտահանությունը կատարվում է հետևյալ միջոցներով.

1) Բարձր ջերմաստիճանով—յեռացնելու, տաք շոգու, այրելու, չոր, տաք ողի միջոցով.

2) Քիմիական նյութերով—սուլեմազի, ֆորմալինի քլորի, կիզիչ կրի, քլորալին կրի, կարբոլան թթվի և ալոց միջոցով:

Վերոհիշյալ միջոցներով ախտահանություն կատարելու համար գոյություն ունեն հատուկ ապարատներ ու հարմարանքներ՝ ախտահանող կամերներ, հիգրոպուլտներ (*ջրցան*), հեղացիրներ (*պուլիերիզատոր*) և այլն:

Միջատաջնում կրչվում ե միջաների՝ մարդու մակարույթների (*պարագիտների*) յեվ կերակրամթերների ու հագուստի վնասառների վոչնացումը:

Շատ միջատներ վարակի փոխանցողներ են հանդիսանում: Վոչիլները բժագոր ու վերադարձ տիֆեր են փոխանցում: Մոծակները (*անոֆելես*)—մալարիա: Ճանձերը—աղիքալին հիվանդություններ, սիբիրախտ և թոքախտ:

Միջատաջնումը կատարվում է.

1) Հագուստը և սպիտակեղենը վոչիլներից, լուերից և փայտոչիլներից թափ տալով, ձեռքով կամ փայտով խփելու միջոցով.

2) Սապոնով ու տաք ջրով լվանալով (մարմինը, հագուստը, սպիտակեղենը)—վոչիլներից ու լուերից.

3) Հարթուկելով սպիտակեղենն ու հագուստը տաք հարթուկով—վոչիլներից.

4) Թակարդներով (*կպչուն թուղթ*)—ճանձերից.

5) Պատուհանները ցանցով ծածկելը—ճանձերից ու մակներից.

6) Աղբն ու գոմաղբը հեռացնելով—ճանձերից.

7) Չոր տաք ողով (*ռուսական վառարանում*)—վոչիլներից.

8) Սպիտակեղենն ու հագուստը ջրի մեջ յեռացնելով—վոչիլներից ու լուերից.

9) Բոցի ներգործությամբ (*փայտոչիլները վառելով ձեղքերում և մահճակալներում զողիչ լամպի միջոցով*).

10) Քիմիական նյութերի (*ծծումբ, քլորալիկրին, սորբենտ*) ներգործությամբ—վոչիլներից, փայտոչիլներից, լուերից և այլ միջատներից.

11) Նալթթավորումով (*կանգնած ջրի ավազնները և ճահիճները նավթով ու կերասինով ծածկելը*)—մալարիական մոռակներից:

### ՄԻՋԱՏԱՋՆԱՉՈՒՄԸ ԾԾՄԲՈՎ

Բնակարանների և իրերի միջատաջնջման համար գործածվում ե ծծութի կոշտերը կամ փայտիկները: Սենյակներից հեռացնում են մթերքները, ծաղիկները և մետաղե իրերը: Պատուհանները, ձեղքերը, վառարանները, սրանց կափուլըները ծեփում, թուղթ են փակցնում: Հատակի վրա ավաղ են թափում, ավաղի վրա աղլուսներ են դնում, փորոնց վրա ծծմբով լի թափա լին դնում: Սենյակի մեկ խորանարդ մետրի համար վերցնում են 100 գրամ ծծումբ: Ծծումբը թրջում են բնափոխած սպիրտով (*գենատուրատ*): Դրանից հետո դրսի գոււը փակում են հերմիտիկ կերպով և սենյակը թողնում են փակած 24 ժամվա ընթացքում: 24 ժամից հետո սենյակը բացում ու քամահարում են:

### ՄԻՋԱՏԱՋՆԱՉՈՒՄ ՔԼՈՐՊԻԿՐԻՆՈՎ

Բնակարանների և իրերի միջատաջնջման համար գործադրը վրբվում ե նաև քլորալիկրինը:

Սենյակներից անհրաժեշտ է հեռացնել մետաղե իրերը, մթերքները և ծաղիկները:

Իրերը չոր փիճակում փուստ են պարանսերի վրա: Պատուհանները, վառարանները, սրանց կափուլըները և ձեղքերն անհրաժեշտ ե ծածկել, թուղթ փակցնելով:

Ախտահանողը պետք է աշխատի հակագաղ հագած: Քլորալիկրինը ցանում են սենյակների հատակի և պատերի վրա: Սենյակի մեկ խորանարդ մետրի համար վերցնում են 10—20 գրամ քլորալիկրին: Դրաի գոււը փակում են հերմետիկ կերպով և սենյակները թողնում են փակած 24 ժամվա ընթաց-

քում: 24 ժամից հետո սենյակները բացում են և իրերը քամահարում մեկ որ ուղիշերվա ընթացքում:

## ՍՈԼՎԵՆԴԻ ԳՈՐԾԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱՏԱԶՆՉՄԱՆ ՀԱՄԱՐ

Սոլվենդը լավ միջոց է հանդիսանում, վոր սպանում և գոչիլները, փայտոչիլները և լուերը: Սոլվենդը հեղուկ է բավականին սուր և անախորժ հոտով:

Իրերի միջատաջնջման համար, դրանց վրա սոլվենտ են ցանում հեղացանի (պուլվերիզատորի)՝ փոշիացուցչի միջոցով կամ սոլվենտի մեջ թրջած ալիքի միջոցով, վորից հետո իրերը փաթաթում ու թողնում են սովորական ջերմաստիճանում 3 ժամվա ընթացքում: Դրանից հետո իրերը թափ են տալիս և քամահարում են 3—5 ժամվա ընթացքում: Ծախվող սոլվենտի քանակը կախված է դրա գործադրման լեղանակից: Հեղացանով ոգովելու ժամանակ սոլվենտի ծախքը փոքր է լինում:

Սոլվենտն ավելի շատ է ծախսվում իրերի վրա ավելով ցանելու ժամանակ: Միջին հաշվով մի ձեռք վերին հագուստի համար ծախսվում է մինչև 100 դրամ սոլվենտ:

Սոլվենտով կարելի է վոչիլներ կոտորել մարմի մազով ծածկված մասերի վրա: Դրա համար մազերը տրորում են սոլվենտով թրջած բամբակով կամ լաթով: Դրանից հետո գրլուխը կապում են լերեսսրբիչով կամ թաշկինակով 1—2 ժամով, ապա մազերը սանրում են խիտ սանրով, վորից հետո ըլվանում են տաք ջրով ու սապոնով:

Փայտոչիլներն ու լուերը վոչնչացնելու համար, պետք է խնամքով սոլվենտ քսել այն բոլոր տեղերը, վոր կասկածելի լին միջատաներ լինելու նկատմամբ: Դրանից հետո սենյակը պետք է քամահարել մի քանի ժամվա ընթացքում:

Սոլվենդը բոցավառվում է, ուստի դրա հետ պետք է շատ զգուշ վարվել:

Սոլվենդը պետք է պահել ամուր և լավ փակվող ամա-

նում, բնակարաններից և կերակրամթերքներ պահելու տեղերից առանձին:

## ԿԱՐՄԻՐ ԽԱԶԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿՈՄՊԼԵՔՍ

ԿԱՐՄԻՐ ԽԱԶԻ ՅԵՎ ԿԱՐՄԻՐ ՄԱՀԻԿ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԽՆԴԻՐՆԵՐԸ

ԽՍՀՄ-ում կարմիր Խաչի և Կարմիր Մահիկի ընկերություններն աշխատավորների կամավոր հասարակական կաղմակերպություններ են:

Կարմիր Խաչի և Կարմիր Մահիկի ընկերությունների հիմնական խնդիրն եւ ամեն կերպ ամրապնդել ԽՍՀՄ սանիտարական պաշտպանությունը:

Սանիտարական պաշտպանությունն ամրապնդել նշանակում է:

1. Առողջացնել աշխատավորների աշխատանքի և կենցաղի պայմանները:

2. Վերացնել վարակիչ հիվանդությունների ոջախները և թուլ չտալ համաճարակների բռնկում:

3. Ամեն կերպ ոգնել կարմիր բանակի առողջապահությանը խաղաղ և պատերազմի ժամանակ, նպատակ ունենալով ուժեղացնել նրա մարտական պատրաստությունն ու մարտունակությունը:

4. Վերացնել աշխատավորության լախ մասսաների սանիտարական անգրագիտությունը և ներդրավել նրանց սանիտարական պաշտպանության ամրապնդման ակտիվ աշխատանքի:

5. Պատրաստել բժշկա-սանիտարական աշխատողների կաղըրեր, վորոնք մեծ քանակությամբ կպահանջվեն սանիտարական պաշտպանության ամրապնդման ակտիվ աշխատանքի:

6. Կուտակել նյութական միջոցներ և բժշկա-սանիտարական ու տնտեսական գույք՝ պատերազմի ժամանակ կարմիր բանակն ու թիկունքը սպասարկելու համար մեծ քանա-

կությամբ բժշկաւ սանիտարական և բուժական-պրոֆիլակտիկ հիմնարկներ կազմակերպու համար:

7. Կառուցել հզոր սանիտարական ավիացիա:

8. Ավահովել բնակչության պաշտպանության հակողակին պաշտպանության քաղաքամասերի բժշկա-սանիտարական սպասարկումը:

Կարմիր Խաչի և Կարմիր Մահիկի ընկերությունների վող գործունեցությունը լենթարկվում է հիմնական խոդրին — ԽՍՀՄ-ի սանիտարական պաշտպանության ամրապնդանը:

Կարմիր Խաչի և Կարմիր Մահիկի ընկերությունները մեծ աշխատանք են անցկացնում աշխատավորների սանիտարական — կենցաղակին սպասարկման ուղղությամբ.

1. Կազմակերպում են աշխատավորներից իրենցից սանիտարական պոստեր գործարաններում, ֆաբրիկներում, հանրակացարաններում, կոլտնտեսություններում, խորհունակեսություններում, ՄՏ կայաններում, տրանսպորտում և այլն:

2. Կազմակերպում են աշխատավորների բաղնիքա-րվացքարանային սպասարկումը:

3. Կազմակերպում են ախտահանիչ բյուրոների, դուշային սարքավորումների և վարսավիրանոցների ցանց.

4. Կազմակերպում են սեփական բուժական պրոֆիլակտիկ հիմնարկների ցանց, այսինքն հիվանդանոցների, պոլիկլինիկաների, ամբողատորիաների, ատամնարուժական և ատամնատեխնիկական կաբինետների, սանատորիաների, հանդստիտների, պիոներական լազերների և այլն:

5. Կազմակերպում են արտադրական ձեռանարկություններ (գործարաններ, արհեստանոցներ):

Կարմիր Խաչի և Կարմիր Մահիկի վող բժշկական-տնտեսական գործունեցությունն անց է կացվում տնտեսաշվարկի կարգով, նպատակ ունենալով միջոցներ կուտակել սանիտարական պաշտպանության կարիքների համար:

Բժշկական-տնտեսական հեշտ գործունեցության հետևանքով, Կարմիր Խաչի և Կարմիր Մահիկի ընկերությունները կկարողանան իրենց սիստեմը ապահովել բժշկա-սանիտարական հիմ-

նարկների ցանցով, վորոնք նախատեսվում են աշխատավորության լայն մասամբներին սպասարկելու և վորոնք պիտի սպասարկեն Կարմիր բանակը պատերազմի ժամանակ:

Պաշտպանական նշանակություն ե արվում նաև Կարմիր Խաչի և Կարմիր Մահիկի վարսավիրանոցներին, վորոնք պետք է կազմակերպված լինեն այնպես, վոր պարագայի պահանջվի դեպքում, կարելի լինի դրանց ոգտագործել վորակես առաջին ոգնության կայաններ:

Բոլոր վարսավիրները պարտավոր են ավարտել ռազմական նիտարական գիտելիքների խմբակները, իսկ վարսավիրանոցի վարիչը կամ գանձապահումին պետք է ավարտի բժշկական քույրերի կուրսերը:

Կարմիր Խաչի և Կարմիր Մահիկի ընկերությունները խոչշոր աշխատանք են տանում կազմելի պատրաստության ուղղությամբ, վորոնք անհրաժեշտ են սանիտարական-պաշտպանական աշխատանքի համար:

Ռազմա-սանիտարական գիտելիքների խմբակներն անցնում են միլիոնավոր աշխատավորներ, վորոնք այդ խմբակներում վերացնում են իրենց սանիտարական անդրագիտությունը և սովորում են առաջին ոգնություն ցույց տալու տեխնիկան:

Սանիտարական պուտերի պետերի կուրսերում պատրաստվում են խմբակներն ավարտողներից ամենալավերը, սանիտարական պոստերի ակտիվիտատ—դեկավարները — սանպոստեր, վորոնք հանդիսանում են Կարմիր Խաչի և Կարմիր Մահիկի առողջապահական և սանիտարական - պաշտպանական աշխատանքի հիմնական ստորին ողակները:

Գործարաններում, ֆաբրիկներում, խոշոր խորհունտեսություններում, տրանսպորտում սանպոստերից կազմակերպվում են սանիտարական դրուժիներ, վորոնք հանդիսանում են Կարմիր Խաչի և Կարմիր Մահիկի մշտական կամավոր սանիտարական պաշտպանական կազմակերպությունները:

Կարմիր Խաչի և Կարմիր Մահիկի ընկերությունները պատրաստում են բժշկական բժշկական սիստեմի համար, սանիտարական պատրաստում են բժշկական սիստեմի համար:

նիշներ, վարսավիրներ և այլ բժշկա-սանիտարական աշխատողներ:

Հիմնական բազացի՝ կաղըերի պատրաստության վող սիստեմի հիմքի՝ մասսայականության ամրապնդման համար կարմիր Խաչի և Կարմիր Մահիկի ընկերությունները բաց են թողել ԽՍՀՄ կենտրոնական կողմից 1934 թ. փետրվարի 20-ին հաստատված հատուկ ՊԱՄՊ («պատրաստ սանիտարական պաշտպանության») նշանակը:

ՊԱՄՊ կրծքանշանի շուրջը մեծ ակտիվություն է բարձրացնում և առաջին հերթին բանվորական լերիտասարգության ակտիվությունը, հայտաբերվում է աշխատավորության հետաքրքրությունն ու ձգտումը գեղի ակտիվ մասնակցությունը ԽՍՀՄ սանիտարական պաշտպանության ամրապնդման գործում:

Վերջին ժամանակներս Կարմիր Խաչի և Կարմիր Մահիկի ընկերությունները սկսել են ծավալել ուղմա-սանիտարական վարժակալանների (ՌՍՎԿ) ցանցը, վորոնցում 120 ժամվածրագրով ուղմա-սանիտարական պատրաստությունն անցնում էն կոճերիտուհիները և անկուսակցական բանվորա-կոլտընտեսալին լերիտասարգությունը:

ՔԱՂՎԱԾՔ «ԿԱՐՄԻՐ ԽՍՁՐ ՍԱՆՊՈՍՏԵՐԻ ԿԱՆՈՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԻՑ»

1. Կարմիր Խաչի (Կարմիր Մահիկի) սանիտարական պոստերը կազմակերպվում են ցեխերում արտադրության մեջ, նորակառուցներում, կոլտնտեսություններում, բանվորական հանրակացարաններում, լերկաթուղալին և ջրալին տրանսպորտի զանազան գծամասերում:

2. Կարմիր Խաչի և Կարմիր Մահիկի սանիտարական պոստերն իրենց համար խնդիր ունեն.

ա) Սանիտարական և ուղմա-սանիտարական գիտելիքների պրոպագանդը՝ նրանց կողմից սպասարկող աշխատավորների մեջ.

բ) հասարակականության մուլիգացիան այն սանիտարա-

կան-առողջապահական միջոցառումներն անցկացնելու համար, վորոնք ուղղված են աշխատանքի և կենցաղի առողջացմանը, սոցիալիստական շինարարության ոժանդակմանը, արտադրության արտֆինանսի կատարմանը և այլն.

գ) Կարմիր Խաչի (Կարմիր Մահիկի) լերկրի պաշտպանության և սոցիալիստական շինարարության գործում ունեցած խնդիրների մասսայականացումը.

դ) առաջին ողնություն ցուց տալը դժբախտ պատահարների դեպքում իր ցեխում, կոլտսոգում և այլն:

3. Կարմիր Խաչի (Կարմիր Մահիկի) սանպոստերը կազմակերպվում են Կարմիր խաչի և Կարմիր Մահիկի բջիջի կողմից, վորը գեղավարում է նրանց աշխատանքները:

4. Կարմիր Խաչի (Կարմիր Մահիկի) սանպոստը բաղկացած և սանպոսի պետից յեկ յերեք ողակավորներից:

5. Սանպոստի պետն առաջ են քաշվում տվյալ արտադրության, կոլտնտեսության, հանրակացարանի և ալլոց Կարմիր Խաչի ակտիվի կողմից և իր պատրաստությունը պետք է անցնի սանիտարական պոստերի պետերի կուրսերում:

6. Սանպոստի ողակավորներն առաջ են քաշվում Կարմիր Խաչի ակտիվի կողմից՝ սանիտարական և ուղմա-սանիտարական գիտելիքների խնդրական անցած անձնավորություններից: (Սանիտարական գրուժինների մասին նոր կանոնադրության համաձայն, պոստերը հանդիսանում էն սանիտարական գրուժինների պատգարակալին ողակները):

ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՊՈՍՏԵՐԻ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐԸ

1. Կարմիր Խաչի (Կարմիր Մահիկի) սանիտարական պոստը առաջին ողնություն են ցուց տալիս դժբախտ պատահարների դեպքերում արտադրության մեջ և կենցաղում մինչև բժշկի գալը և մասավածին բուժիմարկ ուղարկելը:

2. Հայտաբերում են սանիտարական թերությունները, վորոնք ազդում են աշխատանքի և կենցաղի առողջացման

վրա, բարձրացնում են տրավմատիզմը, խանգարում են արդի փինոլանի կատարումը:

3. Միջոցներ ե ձեռք առնում հայտաբերված սանիտարական թերությունների մասին հայտնում ե Կարմիր Խաչի (Կարմիր Մահիկի) բջիջին, ցեխի ազմինիստրացիային և սանիտարական հսկողությանը, այդ թերությունները վերացնելու նպատակով.

ա) Հայտաբերված սանիտարական թերությունների մասին հայտնում ե Կարմիր Խաչի (Կարմիր Մահիկի) բջիջին, ցեխի ազմինիստրացիային և սանիտարական հսկողությանը, այդ թերությունները վերացնելու նպատակով.

բ) Բանվորների և կորոնտեսականների իրենց ուժեղով անց ե կացնում մասսայական սանիտարական-առողջապահական միջոցառումներ (շաբաթորյակներ, սանիտարական շտուրոներ և այլն).

գ) Սոցմեջակցություն ու հարվածայնություն ե կազմակերպում սպասարկու անձնակազմի մեջ՝ այս կամ այն որբեկտի տերիտորիան հավաքելու, մաքրելու և պատշաճ սանիտարական մակարդակի վրա պահպանելու նպատակով:

դ) Պայքար ե մղում սանիտարական կանոնները խախտողների և բանվորական կենցաղը չարամտորեն կազմալքողների դեմ և կարիք լիղած դեպքում դիմում ե վարչությանը, սանիտարական կանոնները խախտողների նկատմամբ միջոցներ ձեռք առնելու համար:

4. Աջակցություն ե ցուց տալիս բջիջին՝ սանիտարական և ոպգմա-սանիտարական գիտելիքների խմբակներ ստեղծելու գործում. այդ խմբակների անդամների հավաքագրման, Կարմիր Խաչի (Կարմիր Մահիկի) նորանդամների հավաքագրման գործում:

5. Ակտիվորեն մասնակցուն ե քաղաքական կամպանիաների անցկացնանը, մորիլիզացիայի լենթարկելով Կարմիր Խաչի (Կարմիր Մահիկի) ակտիվը՝ տվյալ կամբանիաների անցկացման վերաբերյալ ղեկավար որդանների առաջադրությունները կատարելու համար:

Հաստատվում ե  
1934 թ. հունվարի 3-ին  
Կ. Խ. յեղ Կ.Մ. սանիտարական պահության գործում նախագահի տեղակալ՝ ՄՈՅՑՌՈՎԱՆ

## ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԿԱՐՄԻՐ ԽԵՂ ԿԱՐՄԻՐ ՄԱՍԻԿԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ «ՊԱՍՊ» ՊԱՏՐԱՍՏ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՊԱՆՏՎԱՆՈՒՄ ՑԱՆԿԱԿԱՆ ՄԱՍՊԱՆՈՒՄ ՆԱԽԱԳԱԿԻ ՄԱՍԻՆ:

1. Սանիտարական և ոպգմասանիտարական գիտելիքների մասայական պրոպագանդի և բանվորներին, բանվորուհիներին, կոլտնտեսականներին, կորտնտեսուհիներին և բոլոր աշխատավորներին Կարմիր Խաչի ակտիվ աշխատանքներին ավելի լանորեն ներգրավելու նպատակով, մտցվում է ԽՍՀՄ կենտգործկոմի 1934 թ. փետրվարի 20-ի վորոշմամբ հայտարարված «ՊԱՍՊ» (պատրաստ սանիտարական պահապանության) հատուկ նշանակը, վորն ստանալու համար պարտադիր և վորոշ նորմաների հանձնումը հատուկ ցուցակի համաձայն:

2. «ՊԱՍՊ» նշանակը տրվում ե բոլոր աշխատավորներին 18 տարեկանից վեր, կ'որոնք չեն զրկված ընտրական իրավունքներից և վորոնք անհատութեն կամ կոլեկտիվ ձեռվ հանձնել են բոլոր նորմաները ցուցակի համաձայն:

3. «ՊԱՍՊ» նշանակ ստացած անձինք կարող են ոգտագործվել վորպես սանիտարական պոստերի պիտեր, ցեխերում, կոլտնտեսություններում, ՄՏԿ-ներում, հանքերում, բարակներում, տրանսպորտում և այլն:

4. «ՊԱՍՊ» նշանակի շուրջը լայն մասսայական աշխատանքի ծավալումը և «ՊԱՍՊ» նշանակի համար քննությունների կազմակերպումը ղրվում ե Կարմիր Խաչի և Կարմիր Մահիկի ընկերությունների վրա, վորոնք Խորհրդային կոմիերիտական և հասարակական կազմակերպությունների ակտիվ ոժանդակությամբ, պարտավոր են աշխատավորների համար ապահովել կոլեկտիվ և անհատական պատրաստման հնարավորությունը «ՊԱՍՊ» նշանակի նորմաները հանձնելու համար:

«Ղեկավարների նշանակումը, նորմաները հանձնելու խնդիրների վերաբերյալ կոնսուլտացիա, դասագրքերի ապահովում և այլն»:

5. «ՊԱՍՊ» նշանակի նորմաների ընդունումը կազմակերպում են Կարմիր Խաչի (Կարմիր Մահիկի) կոմիտեները, վորոնք նորմաների ցուցակի առանձին կոմպլեքսների ընդունման պարտականությունները հանձնում են կոմիտեների լիազորներին և առաջին հերթին բժիշկական քույրերի դասընթացքների պետերին ու դասատուներին, պահստի բժշկական կազմի հրամանատարական ուսուցման, վարժականների պետերին ու ղեկավարներին, անդրուժինաների պետերին:

6. Քննությունների արդյունքները նորմաների ցուցակի ամեն մի կոմպլեքսի նկատմամբ առանձին, մտցվում են հատուկ սահմանված ձևի քարտի մեջ, վորը արվում և «ՊԱՍՊ» նշանակի նորմաները հանձնելու պատրաստման գործին բոլոր ներկցվածներին: Բոլոր նորմաների հանձնումից հետո քարտը վերադարձվում է կոմիտեյին և պահպատմ և նրա գործերում:

7. Նորմաները լիովին հանձնած բոլոր անձնավորություններին Կարմիր Խաչի (Կարմիր Մահիկի) լրջանային, քաղաքային, գործարանային, տրանսպորտային, կոմիտեների նախագահության վորոշմամբ, տրվում և «ՊԱՍՊ» համարակալված նշանակ և միութենական կ. Խ. և կ. Մ. սահմանադրամության Գործադիր կոմիտեյի հատուկ սահմանված ձևի վկայական:

Կ. Խ. ՅԵՎ. Կ. Մ. ՄԻՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀՀԱԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՅԵՎ. ՌԱԶԳՄԱՍԱՆԻՏ. ԿԱԿՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՊԵՏ ԱՎԱԴ ՏԵՍՈՒՀՉ (ՅԻՒՆԿԵՐ)

## ՑՈՒՑԱԿ

ՊԱՍՊ («ՊԱՏՐԱՍՏ ՍԱԿԱՆԱՏԱՐԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ») ՆՇԱՆԱԿԻՆ ՍՏԱՆԱՑՈՒ ՀԱՄԱՐ  
ՑԵՆԹՐԱԿԱՆ ՆՈՐՄԱՆԵՐԻ:

### 1. ՌԱԶԳՄԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԿՈՄՊԼԵՔՍ

1. Իմանալ առաջին ոգնության անհատական ծրարի պարունակությունը և կարողանալ ոգտագործել այն:

2. Իմանալ սահմանադրական պոստի պետի պայուսակի պարունակությունը:

3. Կարողանալ կանգնեցնել արյունհոսությունը՝ ձեռքով սեղմելով, սեղմանի և վոլորանի միջոցով:

4. Կարողանալ 2—3 բոպեյի ընթացքում հասարակ վիրակապ կատարել:

5. Կարողանալ 8—10 բոպեյի ընթացքում բարդ վիրակապ կատարել բեկակալ (շինա) գնելով կոտրվածքի դեպքում:

6. Կարողանալ արհեստական շնչառություն կատարել ըստ Սիլվիստրի և Շեյֆերի:

7. Կարողանալ ձեռքերով հասարակ և բարդ «փականներ» կազմել փասալածին փոխադրելու համար:

8. Կարողանալ պատգարակները բաց անել և ծալել, կլուել:

9. Կարողանալ պատգարակային ողակի կազմի մեջ մասավածին տեղավորել պատգարակի վրա և փոխադրել նրան 500 մետր հեռավորությամբ 16 բոպեյի ընթացքում:

10. Կարողանալ առաջին ոգնություն հասցնել այրվածքի, ցրտաչարության, խեղդվելու, ուշաթափության, արևահարության, ջերմահարության, ընկնավորության նոպաների և ելեկտրական հոսանքից մասսվելու դեպքում:

11. Կարողանալ գտնել և հաշվել պուտը:

12. Կարողանալ չափել հիվանդի ջերմաստիճանը:

13. Իմանալ, թե ի՞նչ ե սահմանադրական հետախուզությունը:

## ՀԱԿՈՂԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՍԱՆԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄՊԼԵՔՍ

- Իմանալ մաշկի այն մասերը, վորոնք ամենից շատ զգայուն են իպրիտի նկատմամբ:
- Իմանալ իպրիտի ներգործությունը մարդու մաշկի վրա:
- Կարողանալ ինքնոգնություն և փոխաղարձ ոգնություն հասցնել մարդու մաշկի վրա իպրիտի կաթիլներ ընկնելու դեպքում:
- Կարողանալ ոգնություն հասցնել վնասվածին նրա ամբողջ մարմի վրա իպրիտի ցալքուններ ընկնելու դեպքում:
- Իմանալ հեղձուցիչ թՆ-ով քլոր, ֆոսգեն թունավորման հատկանիշները և կարողանալ այդ վնասվածքների ժամանակ ինքոգնություն և փոխաղարձ ոգնություն հասցնել:
- Իմանալ արտասվարեր և փոշտացնող թունավոր նյութերից վնասվածքների հատկանիշները և կարողանալ այդ վնասվածքների ժամանակ ինքոգնություն և փոխաղարձ ոգնություն հասցնել:
- Իմանալ հանրաթունավոր թՆ-ից (կապտաթթու, շմոլազագ) վնասվածքների հատկանիշները և կարողանալ այդ ժամանակ ինքոգնություն և փոխաղարձ ոգնություն հասցնել:
- Իմանալ ԲՀ հակագաղի կառուցվածքը:
- Կարողանալ 5 վայրկյանում իր վրա հակագաղը հագնել:
- Կարողանալ վնասվածին հակագաղ հագնել:
- Կարողանալ աշխատել հակագաղը հագած մինչև 30 րոպե:
- Կարողանալ հակագաղը հագած պատգարակին ողակի կազմում վնասվածին պատգարակի վրա տեղափոխել մինչև 500 մետր հեռավորությամբ:
- Իմանալ, թե ինչպէս ոգտվել անսարք հակագաղով:
- Իմանալ բնակելի շենքերը գաղապաստարանների համար հարմարեցնելու կանոնները.

## ԲՆԱԿԱՐԱՆԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԿՈՄՊԼԵՔՍ

- Իմանալ, թե ինչ և խորանարդությունը (կուրասուրան) և ինչպէս վորոշել այն:
- Իմանալ, թե ինչ և հովանարությունը և ինչպես դրանով ոգավել:
- Իմանալ աշխատանքային և բնակելի շենքերի ջերմաստիճանի ու լուսավորության սանիտարական նորմաները:
- Իմանալ աշխատանքային և բնակելի շենքերը մաքրելու կանոնները:

- Իմանալ արտաքնօցը մաքուր պահելու կանոնները:
- Իմանալ թե ինչպես վարակագերծել արտաքնօցները, աղբի փոսերը և արկղները:
- Իմանալ յերկաթուղալին կայարանների նավամատուցների, վագոնների, շոգենավերի և այլն մաքուր պահելու կանոնները:

## 4. ՍՆՈՒՆԴԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԿՈՄՊԼԵՔՍ

- Իմանալ սննդամթերքներին առաջազրվող լավորակության պահանջները:
- Իմանալ սննդամթերքները պահելու կանոնները:
- Իմանալ այն հիվանդությունները, վոր փոխանցվում են սննդամթերքների միջոցով:
- Իմանալ այն հիվանդությունները, վոր փոխանցվում են հանձերի միջոցով:
- Իմանալ այն հիվանդությունները, վոր փոխանցվում են հում ջրի միջոցով:
- Իմանալ խոհանոցները, ճաշարանները և բուֆետները մաքուր պահելու կանոնները:
- Իմանալ համար և կատարվում հասարակական սննդի աշխատավորների սխսեմատիկ բժշկական քննությունը:
- Իմանալ ճանապարհորդության ժամանակ սննդի առողջապահության կանոնները.

## 5. ԱՆՁՆԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՑԵՎ ՓԻՉԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ

- Իմանալ յեղունգները, մաշկի մազերը, բերանի խոռոչը, և ատամները խնամելու կանոնները:
- Իմանալ, թե ինչպես և կանոնավոր ոգտվել արեից:
- Իմանալ, թե ինչպես պետք և կանոնավոր ոգտվել թից՝ լողանալու համար:
- Իմանալ առողջապահության պահանջները, վոր առաջազրվում և հագուստին և վոտնամաններին:
- Իմանալ պարաղիտալին տիֆերը կանխելու պրոֆիլակտիկ միջոցները:
- Իմանալ, թե ինչ և ախտահանումը և միջատաջնջումը:
- Իմանալ սովորական գործածումը միջատաջնջման նպատակների համար:
- Իմանալ, թե ինչ և սանիտարական մշակումը:
- Իմանալ, թե ինչ են նախադրուշական պատվաստումները:

6. ԿԱՐՄԻՐ ԽՍԴԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿՈՄՊԼԵՔՍ

1. Իմանալ ԽՍՀՄ կարմիր Խաչի և կարմիր Մահիկի ընկերության հասարակական-քաղաքական խնդիրները, սոցիալիստական շինարարության և յերկրի սանիտարական պաշտպանության ամելացման ներկա ետապում:

2. Իմանալ Խորհրդային կարմիր Խաչի և կապիտալիստական յերկների կարմիր Խաչի ընկերությունների միջև յիղած արմատական տարրերությունը:

3. Իմանալ կարմիր Խաչի (կարմիր Մահիկի) սան. պոստի նըպատակները ձեռնարկություններում (խորհտնտեսություններում, ՄՏԿ-ներում, կոլտնտեսություններում, բեգբ մասերում, խորհրդավիճակներում, դպրոցներում, բուհերում, բնակվարձկոոպներում և այլն.)

4. Ակտիվ աշխատանք տանել իր ձեռնարկության, խորհտնտեսության, ՄՏԿ-ի կոլտնտեսության և այլոց կարմիր Խաչի բջիջներում:

Կ. Խ. ՅԵՂ Կ. Մ. ՄԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԿՈՄԻ  
ՆԱԽԱԴԱՀՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ (ՆԱՅԻՆ)  
ՏԵՍՈՒԹ (ՅԻՆԿԵՐ)



ՀՀ Ազգային գրադարան



NL0977508

ԳԻՒՅ 60 Կ.

12 АПР. 1950

281

11

28063



Ю. ФИНКЛЕР

Готов к санитарной обороне

Гив СС Р Армении, Эривань, 1935